



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Երկնից գառաքը երկրի վրայ

Գ. Գ. Խ.

Հոգ. կեանք

Աստուծոյ գերիշխանութիւնը

Միայն վաղորդեան մը տուօ

Վկայութիւնս

Թարգ. Տ. Գորամանուկեան

Բիւզանդուհի Ետրտմեան

Յակոբ Թուխմանեան

Կեսաց ածուներէն

Ամէնը ի բաց առեալ Յովհաննէս

Երեք կորուսաներ

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Վեր. Մ. Տէր Սահակեան

Սերտողութիւն

Յայտնութիւն առաջին գլխուն մէջ...

Կեսագրական

Աստուծոյ Մօնօ

X X X

Պատանեաց

«Համանուէլ»

Սամուէլ Պ.

Մանկանց սիւնակ

Ինծի պէտք եղածը

Հովտին ամենէն հարուստ մարդը

Ջանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու արշաւաններն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ չմը անհատներու համար, այլ ամենուն, բնաւ Տշմարտութեան ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է, **Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ** Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին քարգ-խնու. թիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՅՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԻԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԻԷՆԸ**, միասին Ֆրանսա եւ Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առաքումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արեւիկի՛ր դու
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վստահմա՛ք, որ չըլլայ թէ
Անոր Կանգնողը մահելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեցմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Ժ. ՏՍՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1934

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՆԻՑ ՓԱՌՔԸ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

(ՄԱՏԹ. ԺԷ. 1-8)

Մեր Տէրոջ այս աշխարհի վրայ ապրած կեանքը արտաքինապէս զրկանք մը, խաչելութիւն մըն էր Իր ծնունդէն ի վեր: Խաչելութիւն էր մերկանալ աստուածային մեծափառութիւնը, լեցունութիւնն ու անհունութիւնը եւ ամփոփուել անշուք, տկար մարմնոյ մը մէջ: Խաչելութիւն էր մէկզի դնել Իր իշխանական դիրքը եւ ծառայի կերպարանքով քալել խոնարհութեան ու հնազանդութեան ճամբայէն: Խաչելութիւն էր բաժնուիլ Իր երկնաւոր Հօրմէն ու սուրբերու ընկերակցութենէն եւ շփման մէջ մտնել մարդոց հետ, որոնցմէ եւ ոչ մին կը հասկնար զինքը, եւ որոնց մեղքը ամենէն խոր կերպովը կը խոցէր Իր սուրբ սիրտը: Ալ աւելորդ է յիշել Անոր մարմնոյ ու մտքի բնական պահանջներէն զըրկելը, աղքատիկ ու արհամարհուած կեանք մը ապրելը, կրած թշնամանքները, եւ վերջապէս տանջալից ու անարգական մահը:

Այսու ամենայնիւ Անիկա միշտ կ'ապրէր բաց երկինքի մը տակ: Ոեւէ ատեն կարող էր Իր զըլուխը դէպի վեր բարձրացնել եւ ահա Իր վերայ ուղղուած կը տեսնէր Իր երկնաւոր Հօր «Ի՞նչ բազեղ աչքերը. կը բաւէր որ աղաղակէր, «Հայր, փառաւորէ՛ Բու անունդ», եւ իսկոյն իրեն կը պատասխանուէր, «Փառաւորեցի ալ ու նորէն պիտի փառաւորեմ»: Այսպէս, արտաքին բոլոր անպաստ պարագաներուն հակառակ, Անիկա Իր Հոգիովը միշտ ալ կ'ապրէր երկինքի փառքը երկրի վրայ այնպէս որ Անոր սրտին ամենէն մօտիկ աշակերտը կրցաւ վկայել ըսելով, «Անոր փառքը տեսանք Հօրմէն Միածնի փառքին պէս՝ շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն»:

Սակայն Անոր այդ ներքին փառքը երբեմն

կ'արտայայտուէր արտաքին երեւոյթով ալ: Ասոր ապացոյցն է մասնաւորաբար «Այլակերպութիւնը»: Այդ ատեն նախ Իր հոգւոյն աստուածային փայլը արտացոլաց նաեւ Իր մարմնոյն վերայ եւ փոխակերպեց Անոր արտաքինն ալ երկնաւոր էակի մը երեւոյթին, «Երեսը փայլեցաւ արեգակի պէս եւ հանդերձները ճերմկացան լոյսի պէս»: Երկրորդ՝ Անիկա վայելեց երկնաւոր սուրբերու այցելութիւնը: Թէպէտ մարմնաւոր Իսրայէլը զինքը մերժած էր եւ օրինազանց, նորինսկ Բէեղզբուղ նկատած էր, սակայն այժմ Անոր սուրբ խոնարհած էր հոգեւոր Իսրայէլը, յանձին Մովսէսի, օրէնքի միջնորդին եւ յանձին Նդիարի, մարգարէներու ներկայացուցիչին: Վեց օր առաջ Պետրոս՝ իբր ներկայացուցիչը Աստուծոյ նոր ժողովուրդին, դաւանած էր, «Դու ես Իրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին», իսկ այժմ ալ հին տնտեսութեան այս երկու պատկառելի անձերը, — որոնք Յիսուսի ժամանակակից հրեաներէն ալ ամենէն մեծ յարգանքը կը վայելէին, — եկած երկինքի բոլոր սուրբերուն կողմէն՝ կ'երկրպագէին անոր, որ յանձն առած էր Իր Հարչարանքով ու մահով ի կատար հանել իրենց թերակատար գործը, մարդիկը Աստուծոյ հետ հաշտեցնելու եւ Անոր սեփական ժողովուրդ մը, սուրբ ազգ մը պատրաստելու գործը:

Այս ամէնը ինքնին արդէն երկնային փառք էր, սակայն ատոնցմէ շատ աւելի մեծ էր, ճշմարտապէս փոխադրուելն էր երկինքի փառքին երկրի վրայ՝ Աստուծոյ ներկայութիւնը: Իր Հոգիովը Յիսուս արդէն միշտ կը վայելէր այդ ներկայութիւնը, սակայն այլակերպութեան ատեն Աստուած լուսափայլ ամպով իջաւ լերան վրայ

եւ Յիսուսի մարմնաւոր աչքերն ալ տեսան Անոր վեհափառութիւնը ու մարմնաւոր ականջները լսեցին Անոր խօսքը, «Ատիկա է Իմ սիրելի Որդիս, Որու հաւնէր եմ, ատոր մտիկ ըրէք»: Ա՛հ, ի՛նչ վեհաշուք տեսարան եւ ի՛նչ խրախուսիչ վկայութիւն:

Բնականաբար այս ամէնը շատ խոր տպաւորութիւն ձգեցին երեք ականատես առաքեալներուն վրայ: Անոնք այդ զէպքը Հմոռցան իրենց երկրաւոր կեանքին ամբողջ տեղութեանը մէջ: Դեռ շատ տարիներ ետքը անոնցմէ մէկը այլակերպութեան ականարկելով կը գրէր, «Ոչ թէ մենք վարպետութեամբ շինուած առասպէլներու ետեւէ երթալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի գորութիւնն ու զալուստը ցուցուցինք, հապա Անոր մեծափառութեանը ականատես ըլլալով... երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, Որու հետ էինք սուրբ լերանը վրայ» (Բ. Պետ. Ա. 16-18): Այս խօսքէն նախ կրնանք եզրակացնել թէ առաքեալը մասնաւոր համարձակութեամբ ու ազդուութեամբ կը վկայէր Յիսուսի փառքին նկատմամբ՝ յիշելով այլակերպութիւնը: Սակայն ատոր չափ եւ թերեւս ատկէ աւելի կարեւոր է այդ փառաւոր զէպքին ուրիշ մէկ ազդեցութիւնը. ատկէ ետքը Պետրոս, Յովհաննէս եւ Յակոբոս ուրախութեամբ կ'երթային զէպի Երուսաղէմ, քանզի ստուգապէս համոզուած էին թէ իրենց համար անհատկնալի հանելուկին, Յիսուսի չարչարանքներուն ետեւէն վսեմափառ յայտնութիւն մը պիտի գար. անոնց այդ հաւատքի ազդեցութեամբ զօրացաւ նաեւ միւս առաքեալներունը, առաջին երեքը առջեւէն գացին եւ միւսները հետեւեցան:

Այլակերպութիւնը շատ մեծ ազդեցութիւն գործեց նաեւ Յիսուսի վրայ: Անիկա այդ լեռնէն վար իջնելուն պէս Իր քայլերը պիտի ուղղէր զէպի Երուսաղէմ, ուր մարմնոյ ու հոգւոյ անհուն տառապանքի պիտի ենթարկուէր: Այդ ամենուն մէջ սատանայ պիտի փափար Անոր ականջին շատ մը տարակուսական հարցումներ, «Իրա՞ն Աստուած Քու Հայրդ է եւ կը սիրէ Քեզ: Արդեօք սխալած չե՞ս, ապահո՞վ ես թէ Դուն պիտի տանիս յաղթանակը: Տե՛ս, Քեզի թշնամի են նոյնիսկ Իսրայէլի սուրբ առաջնորդներն եւ օրինապահ ու բարեպաշտ փարիսեցիները եւ Քեզ կը լքեն, կ'ուրանան ու կը մատնեն Քու աշակերտներդ իսկ»: Սակայն Յիսուս միտք բերելով «Սուրբ լերան» վրայ յայտնութիւնը՝ պիտի կրնար դիմադրել այդ ամենուն թէեւ ամենէն քուած եւ իբր ռճրագործ կապուած, նա պիտի

կրնար քահանայապետին ըրած բաղդարոշ հարցումին, «Դո՞ւն ես Քրիստոս, Որդի Աստուծոյ», համարձակաբար պատասխանել, «Դուն ըսիր, բայց կ'ըսեմ ձեզի, ասկէ ետեւ պիտի տեսնէք Որդի մարդոյ գորութեան աջ կողմը նստած ու երկինքի ամպերուն վրայ եկած»: Այ՛ո, պիտի կրնար նոյնիսկ խաչին վրայէն, Իր աղիողորմ, «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր» էն քիչ ետքը, ուրախութեամբ ազադակել, «Հայր, Քու ձեռքդ կ'աւանդեմ Իմ հոգիս», քանզի պիտի յիշէր այլակերպութեան ատեն Իր Հօր տուած վկայութիւնը, «Ատիկա է Իմ սիրելի Որդիս, Որու հաւնէր եմ»:

Ասով չենք ուզեր ըսել թէ Յիսուսի խաղաղութեան, Աստուծոյ հայրական սիրոյն նկատմամբ ունեցած անհուն եւ անշեղ վստահութեան միակ զաղանիքը «Սուրբ լերան» վրայի զէպքն էր, երբեք: Ինչպէս վերեւ ականարկեցինք, Անիկա միշտ ալ կը վայելէր երկինքի փառքը երկրի վրայ, քանի որ Իր հոգիովը անընդհատ կ'ապրէր Աստուծոյ ներկայութեանը մէջ եւ զիտակից էր թէ Իր Հօր հաճութիւնը միշտ Իր վրայ էր: Այլակերպութիւնը միայն իբր կնիք մը արտաքինապէս ալ վաւերացուց Անոր այդ հոգեկան ապրումները եւ Անոր տուաւ Իր փառաւոր յարութեանը նախաճաշակը:

Այսպէս՝ ներքին հոգեկան յստակ ապրում եւ այլակերպութիւն միացած՝ դիւրացուցին Յիսուսի խաչին փշալից եւ տառապալից ճամբան եւ չթողուցին որ Անիկա ընկճի ո՛չ Գեթսեմանիի դառն գաւաթին եւ ո՛չ ալ Գողգոթայի վրայ կըրած մարմնական ու հոգեկան անլուր տուայտանքին առջև:

Արդ, մեր կեանքն ալ ընթանալ մըն է խաչի ճամբայէն. մեր Տէրն անձամբ ըսած է, «Եթէ մէկը Իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու Իմ ետեւէս գայ»: Սակայն ինչպէս Յիսուսի խաչին ճամբան դիւրացուց՝ զԱյն նախ այլակերպութեան լիոք բարձրացնելով, մեր երկնաւոր Հայրը պատրաստ է՝ մեզի ալ նախ երկնային վայելքներ շնորհել, Իր փառաւոր ներկայութիւնով մեզի ալ նախ վստահութիւն ներշնչել Իր անհուն սիրոյն, ամենակարողութեան եւ ապագայ աննման փառքին նկատմամբ, եւ ապա զնել խաչը մեր ուսին վրայ:

Եւ ատոր պայմանները երկու են: Առաջին, պէտք է երթանք բացարձակ հնազանդութեան ճամբայէն: Յիսուս այդպէս ըրաւ: Նա ըսած է, «Ձո՛ս ու ընծայ չուզեցիր Դուն, հապա Ինծի մար-

մին մը պատրաստեցիր... այն ատեն ըսի, Ահա՛ կուգամ ես... Քու կամքդ ընելու, Ով Աստուած» (Եբր. Ժ. 5-7): Եւ ստուգելու Անիկա ընթացած է օրօրոցէն մինչեւ Գեթսեման ու Գողգոթա հնազանդութեան նեղ շաւղէն: Այլակերպութենէ առաջ ալ առաւ հնազանդութեան մասնաւոր քալ մը, — վճռեց Երուսաղէմ երթալ, որպէսզի հոն «շատ չարչարանքներ կրէ... եւ սպաննուի»: Իր այդ քայլին դէմ էր Իր մարմինը, դէմ էին ամբողջ հրեայ ազգը եւ Իր առաքեալները. անոնց ամենուն համար խաչը գոյթակողութիւն էր: Նոյն իսկ Պետրոս փափաց Անոր ականջին, «Քա՛ւ լիցի Բեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ»: Բայց Յիսուս երբեք ականջ չղրաւ աջէն ու ձախէն եկած ձայներուն. այո՛, նոյնիսկ սատանայ կոչեց Իր սիրելի աշակերտը, որ զինքը ետ պահել կ'ուզէր խաչէն. քանզի համոզուած էր թէ Աստուծոյ կամքը զինքը դէպի խաչ կ'առաջնորդէր եւ ինքը պատրաստ էր ամէն զնով կատարել Անոր կամքը: Այդ պատճառաւ Հայրն ալ վարձատրեց զինքը՝ երկինքի փառքը փոխադրելով երկրի վրայ եւ վկայելով, «Ատիկա է Իմ սիրելի Որդիս Որու հաւներ եմ»:

Մեզի ալ չէ՞ պատահած յաճախ նոյն բանը՝ գէթ փոքր չափով մը. վայելած չէ՞նք մենք ալ երբեմն երկինքի փառքը երկրի վրայ եւ ողորուած չէ՞ մեր սիրտն ալ երկնային ուրախութեամբ՝ մեր էութեան խորքին մէջ լսելով Աստուծոյ Հոգւոյն ձայնը, որ մեզի համարձակութիւն կուտայ Ամենակարողը մեր Հայրը կոչելու. եւ ե՛րբ էր այդ: Չէ՛ որ այն օրերուն, երբ մեր հնազանդութիւնը ամենէն կատարեալն էր: Ուստի երբ կը փափաքինք աւելի յաճախ վայելել Աստուծոյ ներկայութիւնը, եւ մասամբ ապրիլ երկինքի մէջ գեռ երկրի վրայ եղած ատենն իսկ, երթալու ենք միշտ հնազանդութեան ճամբայէն: Այն ատեն մեր սիրտը խաղաղ պիտի ըլլայ եւ մեր դէմքն ու աչքերը պիտի փայլին, եւ մենք փոխադրուած պիտի ըլլանք այլակերպութեան լերան վրայ:

Սակայն այդ երեւոյթին վայելքին համար հնազանդութեան չափ էական է նաեւ երկրորդ պայմանի մը լրումը: Այդ է աղօթքը: Յիսուս երբ կ'աղօթէր, «Իր երեսին տեսքը ուրիշ կերպ մը եղաւ եւ Իր հազուստը ճերմակ ու փայլուն եղաւ»: Քանզի Անիկա աղօթքով ճշմարտապէս հաղորդակցեցաւ Աստուծոյ հետ, զպաւ Անոր եւ Անկէ փոխանցեց Իր վրայ Անոր փառքը: Աղօթքով մենք ալ փոխադրուած կ'ըլլանք այլակերպութեան լեռը, երկնային փառքին մէջ: Գ. Գ. Խ.

ՀՈԳ. ԿԵՆՆՔ
.....

ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Աստուածաշունչի Աստուածը ճշմարտապէս Աստուած է: Անոր գերիշխանութիւնը միահեծան է տիեզերքի մէկ եզրէն միւսը:

Ամէն զօրութեան վրայ կը գահակալէ եւ Իր ախրապետութիւնը կը պարտադրէ ամէն իշխանութեան: Ոչ մէկ բան զինք կը միջամտէ, ոչ մէկ բան իրեն կը համեմատի, ոչ մէկ բան զինք կը սահմանաւորէ, բացի այն սահմանաւորումներէն որոնց ինքզինք պարտադրած է:

Ան բացարձակ Տէր է, Իշխան եւ Տիրապետող է, Թագաւոր է, Աստուած է: Մեր երկիրը Իր ձեռագործն է, զայն չկարգաւորեց, զայն ստեղծեց: «Սկիզբէն Աստուած... ստեղծեց»: Նիւթը իր. թըշնամին չէ: Ինք ուղեց զայն եւ անոր վրայ կ'իշխէ: Ինք անդունդը դուրս հանեց: Իր կողմէ հրաման մը՝ եւ հրաշքը կատարուեցաւ, երկինք, երկիր ու ծով ոչինչէն դուրս խուժեցին: Իր կողմէ խօսք մը բաւական է որ վերադառնան: Օր մը այս խօսքը պիտի արտասանուի, երբ տնտեսութիւններու վախճանը հասնի:

Իր հրամանով արեւը լոյսը կը բոցավառէ: Ասաղը կը փայլի գիշերը մինչեւ որ Ինք մաւրէ: Ծովը կը կոծէ կամ կը խաղաղի այն սահմաններուն մէջ զոր Ինք զծած է: Ամէն ինչ կը հնազանդի եւ կը հպատակի Իրեն:

Աստուած Աստուած է:

Մարդուն վրայ, տրամաբանելի իրաւասութեամբ, կ'ուզէ միեւնոյն իշխանութիւնը գործադրել: Չայն ազատ ստեղծեց, անկասկած, բայց որպէսզի ազատօրէն հնազանդի Իրեն: Իր անձին գերապատուութիւնը բացարձակօրէն կը պահանջէ:

Աստուած խորհուրդի չընունիւր մարդուն հետ, բնաւ չվիճիր, անոր կարգադրութիւնները ամենեւին նկատի չառնեք: Կը հրամայէ, կ'ստիպէ, կը պահանջէ: Իսկ վերջնականօրէն կը հարուածէ կամ կը վարձատրէ:

«Աբրահամ, դուն բազմութեան հայր պիտի ըլլաս... եթէ Ինծի հնազանդիս»:

«Մտիկ ըրէ, ով Իսրայէլ, Ես Տէրս քու Աստուածդ եմ... եթէ Իմ շաւիղներուս մէջ քալես, պիտի ապրիս, եթէ անոնցմէ հեռանաս՝ պիտի մեռնիս»:

Աստուած խղճմտանքի Աստուած է:

Ան հաւասարապէս Աստուած է բարոյական եւ ֆիզիքական տիեզերքի վրայ:

Անկէ է՝ որ կը բղխին բոլոր «դուն պարտիս»-ները մարդուն ներսիղին: Առանց իր օրէնքին՝ ամենեւին բարոյական լոյս չկայ: Առանց իր հիմնած դրութեանց՝ ամէն սկզբունք քմահաճոյքի առիթ է: Լոկ ինք բարի է:

Անոր գերիշխանութիւնը կը տարածուի անվրէպ նաեւ հոգիին վրայ:

Ամենայն լիազօրութեամբ Ան կ'ուզէ մեր հոգին վարել: Մինչեւ որ զինք չենք գտած, եւ միայն զինք, խոռվք մը կը տիրէ մեր անձերուն խորը: Աստուած մարդուն յաւիտենական կարօտն է: Անկէ զատ ոչինչ կարելի է գտնել գոհացուցիչ:

«Հոգիս ծարաւի է Աստուծոյ, կենդանի Աստուծոյն» կ'ըսէ Սաղմոսերգուն:

«Աստուծոյ ծարաւի եմ, Աստուծոյ ծարաւի եմ» կը պոռայ զինք չճանչցող հոգին խուլ անապատի մը խորին ամէն արձագանքի:

Ամէն երկրի, նմանապէս ամէն մարդու նըկատմամբ Աստուած ծրագիր մ'ունի: Իւրաքանչիւր մարդկային կեանքի իմաստը այս ծրագիրը հետապնդել: ու գտնել, հասկնալ ու անոր նըկատակին ու առաջնորդութեան բոլորովին զիջանիլ է: Ասիկա է Աստուծոյ հետ քալելը:

Հոգ է խաղաղութիւնը: Հոգ է ներզաշնակութիւնը: Հոգ է կեանքն ու երջանկութիւնը: Սյուր՝ քոս է, պարապութիւն է, խաւար է: Ապրիլ՝ ըսել է «Տէր, ոչ թէ իմ կամքս, հապաքուկդ», իր գերիշխանութեամբ, իր սուրբ պարտադրութեամբ, իր բացարձակութեամբ:

Եւ այժմ, բաւականանալով այսքան մը նըկարագրականով, քննենք թէ այն Աստուածը զՈր կը պաշտենք, որքան նուաստացուցած ենք:

Դժուարեցանք Անոր մեծութեան մագլցելու, ու զինք իջեցուցինք մեր խոնարհութեանը: Չը համաձայնեցանք իր կամքին եւ ուզեցինք որ ինք մերինին յարմարի: Չտարինք իր պայմանաւորումները ու փոխարէն մերինը իրեն ընդունիլ տալ փորձեցինք:

Թագաւորը մեզ իր պալատը բնակելու կը հրաւիրէր, մենք զինք մեր խրճիթները մշտցուցինք, ըսելով «հոգ նստէ: Քու քովդ իրողութիւնները գերազանց գեցեցիկ, մեծ, բարձր են, զի կը զարհուրեցնեն: Միակ խնդրանքս է որ թշուառականիս ընկերն ըլլաս, դժուար ճամբուս նեցուկը, արտասուաց հովիտիս մխիթարիչը, խառնաշփոթ գործերուս՝ օգնականը, բարեկամը, առօրեայ կեանքիս՝ Աստուածը, շատ բարի ու շատ մարդկային, շատ հասկնալի եւ

ոչ չափազանց պարտադրիչ»:

Սակայն, բարեկամներ, արթնութիւնը նախ Աստուծոյ գերիշխանութեան գիտակցիլն է: Այս գիտակցութեան դաւանութիւնը իր ոչնչութեանը, անզօրութեանը, անհուն ստորնութեանը հոգակումն է, կամ լոխմաց «Խօսէ Տէր, քանզի Քու ծառագ մտիկ կ'ընէ» յօժարիլն է:



Աստուծոյ գերիշխանութեան տեսիլին պէտք ունինք, եւ բացարձակապէս: Աստուծոյ նպատակն է ձեզ զրաւել այս պահուս այդ խորհուրդին շուրջ: Այդ տեսիլքը շնորհք մ'է ինչպէս ամէն լոյս ու աստուածային յայտնութիւն: Աստուած կ'ուզէ զայն ձեզի տալ: Եթէ զայն չստանաք, յայտնապէս կ'իմացնեմ թէ արգելքը ձեր մէջ է: Պարզ է որ դուք կը յամառիք յանդգնութեամբ Աստուծոյ երեքցնել ձեր ճշմարտութիւնը, ձեր ընդգիծութիւնը, ձեր հպարտութեան նախատինքը, ձեր ատելի «ես»ն ու մեղքը:

Աստուծոյ գերիշխանութեան տեսիլքը նախ կը խոնարհեցնէ:

«Որքա՛ն մեծ ես Աստուած իմ, որքա՛ն մեծ, իսկ ես՝ որքա՛ն պոքիկ: Պատկառելի նախանձաւորութեամբ Աստուած կը հաճի իր վեհութեան ցուցադրութիւնը ընել: Երբ Սինայի օրէնքը նօթագրելու առիթով կը խօսի: բոցավառ ճարձատում եւ որոտում կը պատէ լեռը: Եւ ամբոյսը սարսափէ դողահար՝ կը ծնրադրէ դաշտին մէջ...»

Երբ տաճարին մէջ մարգարէներուն կը յայտնուի իր վաղուան առաքելութիւնը վստահելու համար, սրբազան խնկատունը կ'ողողի իր փառքին վեհութիւնովը, մինչ սերովքէնէրը բարձրաձայն կ'աղաղակեն՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրաց Տէրը:

Աւետարանին մէջ երբ իր գահին վրայ կը խօսի իր Որդւոյն իշխանութիւնը հռչակելու համար, երկինքէն իր ձայնին կ'ընկերակցին հրաշալի լոյսեր ու շարժեր, այնպէս որ բազմութիւնը կը յայտնէ վրդովեալ, «հրեշտակ խօսեցաւ իրեն հետ»:

Ուրեմն որքան ցաւալի է որ քրիստոնեայ ժողովուրդը որպիսի՝ թեթեւամտութեան մը կը ծառայեցնէ աստուածային վեհափառութիւնը: «Աստուած ու ես, ես ու Աստուած»: Դատողութեան այս հեշտամոլ կենցաղը ինքնին ահա կը խեղաթիւրէ տիեզերական վսեմ նպատակը: Ասի-

կա աստղերով քարէզնդակ խաղալու ու երկու մատով անհունը չափելու անմտութեան կը նըմանի:

Մի՛ ըսէք թէ աւետարանը խափանեց մեզմէ Աստուծոյ մեծափառ ու ահարկու դէմքը: Մի՛ պատճառաբանէք թէ Քրիստոս «Ով Հայր մեր որ երկինքն էս» աղօթեց եւ «Իմ Աստուածըս ձեր Աստուածն է», ըսաւ: Թէպէտ շնորհքի որդիներն ու ժառանգակիցները, հին ուխտի Աստուծոյն դէմքին վրայ սիրոյ ճառագայթներուն լուսաւորուիլը տեսան, եւ պղնձէ թուած կուրծքին տակէն մարմնեղէն սրտի մը զարկը զգացին, սակայն ատիկա երբեք աստուածային պարտադրութիւններուն պակսելուն պատճառ մը չեղաւ:

Քրիստոս սուրբ եղաւ, ինչպէս «Հայրը որ երկինքն է»: Քաղցր ու հեզ Տէրը դատապարտեց նալուածքով շնացողը: Կտրել ու հանել յորդորեց աչքը եթէ ան մեղքի պատճառ է: Ան չմարող կրակն ու պատառոզ բոցի սպառնալիքը կ'ընէ անոնց որ չարին չեն հակառակիր:

Աստուծոյ խստապահանջ աչքերը մեր էութեան ամենածածուկ խորշերը գննելու կը խոյանան: «Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը ինչալը»,:

Աստուծոյ մեծութիւնը նոյնն է մսուրին մէջ կամ Սինայի վրայ, Գալիլիայի սահմաններուն մէջ կամ Նոյի տապանին վրայ, խաչին վրայ կամ սրբաբանին մէջ:

Աւետարանին ծոցին մէջի նկարագրութիւնները Աստուծոյ վեհափառութեանը պահպանութեանը կոթողներն են: Ուրեմն թող մէկը չհամարձակի զիջումներ ընել՝ Աստուծոյ սէրը պատրուակ բռնելով:

Երկրորդ, Աստուծոյ գերիշխանութեան տեսիլը մեզ կ'ամբաստանէ:

Կարելի չէ երկրի վրայ ոեւէ բաղդատութիւն մը գտնել Աստուծոյ սրբութեան նկարագրակաւ ընելու համար. ո՛չ լերանց բարձունքներու սպիտակ ու անբիծ ձիւնը, ո՛չ հալոցի ոսկին եւ ո՛չ կիզող բոցը կրնան բացատրել զայն: Ոչ մէկ աչք կը դիմանայ փայլփլումի որ գննէ զայն, ոչ մէկ խիղճ ջերմութիւնը չափելու համար կըրնայ տոկալ հուրի:

Աստուած կը սոսկայ պղծութենէ: Կը պժգայ, կը գարշի անկէ: Եթէ զայն քիչ մը գտնելու ըլլայ, կը վռնտէ, կը հալածէ, կը շանթահարէ, կը բնաջնջէ: Ամենեւին չկրնար համբերել, չկրնար թուլատրել, չկրնար ներել: Աստուծոյ մեղքին նկատմամբ ունեցած բարկութիւնը Սուրբ Գրոց

մէջ գտնուած ամենէն ահուկի ճշմարտութիւնն է: Արդար բարկութիւն մը, պատուաւոր եւ սուրբ:

Կ'աղաչեմ, բողոք մի բարձրացնէք այս զարմանալի կրօնքին դէմ. այդ բողոքով դուք ձեր հոգեւոր իմացականութեան խեղճութիւնը պիտի մատնէք: Մանաւանդ մի ըսէք թէ շնորհքը վերցուց օրէնքին սարսափը, եւ թէ հոն ուր մեղքը աւելցաւ՝ ա՛լ աւելի եղաւ սէրը:

Պիտի անտեսե՞նք Գողգոթայի խաչը:

Աստուծոյ Որդւոյն մահուան պատճառը պէտք է փնտռել զիսք խոշտանգող զամբէն աւելի տենդազին Իր սիրտը պատռող հոգեւոր տագնապին մէջ: «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր» աղաղակին տակ Ան կ'ենթարկուի աստուածային անէծքին ու դժոխքի ամենի լքման: Եթէ ճիշդ է որ մեղքին վարձքն ու քաւութիւնն է այս անօրինակ՝ անարգութիւնը, ուրեմն Հին Ուխտին ո՛ր մասին մէջ կրնանք զրտնել այսքան սեւ էջ մը զոր Աւետարանը ունի:

Կտրելի չէ հակառակիլ: Գողգոթայի խաչով Աստուած մարդկային անցնող ամէն սերունդի կը գոչէ, «Տեսէք, ինչպէ՛ս սէր եմ... բայց տեսէք ինչպէ՛ս սուրբ եմ»,:

Անհրաժեշտ է որ «Ես սուրբ եմ»,ը քանդակենք կարմրած ունելիով, մանաւանդ մեր սրբտերուն վրայ:

Սակայն աւա՛ղ, աստուածային գերիշխանութեան այս սուրբ տեսիլը արդարեւ կորսնցուցինք:

Աստուծոյ առջեւ ակնածանք, երկիւղ եւ սրբութիւն մշակելը անտեղի համարում մ'է ներկայ քրիստոնեայ սերունդին: Մեր կիներն ու երիտասարդները մեղսագլոր ընթացքներուն համար ալլելս չեն խղճահարուիր. զեղխութիւնն ու գայթակղութիւնը յաջողած է իր ազատ մտքը ունենալ քրիստոնեայ տուներէ եւ հաւաքութիւներէ ներս... սրտերէ ներս, տաճարներէ ներս...

Բայց Աստուած Իր սրբապահանջ ձգտումին մէջ աներկբայօրէն անդդուելի է դարձ ի դար: Աստուած Աստուած է:

Եւ վերջապէս, Աստուծոյ գերիշխանութեան տեսիլը մեզ պիտի փրկէ:

Բարեբախտաբար աստուածային սրբութիւնը չէ ներկայացուած իբր անհասանելի կարօտ մը որ վնասող ճամբորդը անօգուտ ճիգերու մէջ ջախջախէ: Վերէն տրուած, աստուածային անճառ շնորհքին մէկ անակնկալ պարգեւն է ան:

Կա՞յ հոգի մը որ ծարաւ է Աստուծոյ բացարձակութեան: Կա՞յ տղեկ մը, մաշած ձեր մը

յոգնած բանուոր մը, եւ մանաւանդ ինքնիրմէ զգուած մեղաւոր մը որ առ Աստուած վերանալու խորունկ տենչը ունի: Կա՞յ աղքատ մը, հարուստ մը, պարզուկ մը կամ ազնուական մը զոր ճշմարիտ կեանքի եւ բարձր հոգեւորութեան մը հառնելու համար, փափաքի համար ցաւով ու մշտատեւ խռովքով մը զրաւուած է, թող անմիջապէս ընդունի բարի աւետիսը: Աստուած կըրնայ հրաշք կատարել, կրնայ անոր բոլոր էութեանը մէջ անցնել իր բոլոր փառաւորութեան մեծութիւնը եւ իր լման ու սուրբ գերիշխանութիւնը, բաւական է որ այս բանին համար ամենայն պարզութեամբ ան Աստուծոյ բացուի, ինչպէս ծաղիկ մը կը բացուի արեւի ճառագայթներուն:



Երբ մարդուն հոգին կը կիրարկէ այս պատուական խորհուրդը, յայնժամ ան կը շարախուի Աստուծոյ կամքին սիրովը ու միայն մէկ նպատակ կ'ունենայ, մէկ ըսելիք:

Առաջ Աստուած:

Նախ իմ կեանքիս մէջ, ճշմարիտ անձնուրացութեան սկզբունքով: Դուքս անձնական փառասիրութիւններս, հպարտ ակնկալութիւններս, մարդկային նախընտրութիւններս, փափաքներս, ճաշակներս, հակումներս, համակրութիւններս ու հակադրութիւններս:

Ինչ որ բարոյական վիճակի համար է, է նաեւ կրօնականին համար, «Առաջ Աստուած»:

Ամէն բանէ վեր կը նախընտրեմ իր խօսքը: Հոս է Աստուծոյ կամքը, հաւատքի, կեանքի եւ յոյսի համար: Ես կը հաւատամ Աստուածաշունչին, բոլոր Աստուածաշունչին...: Ես խիզախօրէն կը հրաժարեմ ամէն իրաւունքէ որ կը յանդգնի զայն հարուածել: Մարդկային գիտութեան կ'ըսեմ՝ բանաձեւելու համար շատ քիչ խօսք ունիս: Դուն երէկ ծնար եւ կը կակաղես... երկրի ու երկինքի մէջ տեղ չատ աւելի ճշմարտութիւն կայ, քան ինչ որ չկարծեք քու զպրօցական իմաստութիւնդ:

Հարց կուտամ խղճմտանքիդ՝ ո՞վ ուրեմն զքեզ ստեղծեց. ինչպէ՞ս կրնաս լըբութիւն բանեցնել եւ ինքզինքդ ցցել Անոր խօսքին դէմ որ զքեզ ըրաւ:

Եւ ամէն օձի, ըլլայ Սատան կամ կասկած, որ կուգայ սողոսկիլ «Իրա՞ւ Աստուած ըսաւ»ով, կը պօռամ:

Ստախօս:

Այսպէս, թէ կղերական եւ թէ աշխարհական գործի համար, անընդհատ կարգախօսն է «Առաջ Աստուած»:

Եւ Անոր գերիշխանութեան ի խնդիր, թող Ս. Հոգին ազատ ներգործութիւն ունենայ մեր կեանքին մէջ. սաստիկ փոթորիկի մը ուժգնութեամբ թող յանդիմանէ քօղարկուած ամէն արատաւոր շարժում ու խռովելով զահակալէ մեր խորհուրդի ու գործի բոլոր ասպարէզին, որպէսզի Որդին մտքդոյ արժանաւորապէս փառաւորուի: Թարգ. Տ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԻԱՅՆ ՎԱՅՐԿԵԱՆ ՄԸ ԱՌԱՋ

(Շարունակութիւն)

(Ընթերցողը կրնայ վերնագիրը իւրաքանչիւր նախադասութեան սկիզբը դնելով կարգալ, իմաստը աւելի որոշ հասկնալու համար):

«Ծագող արեգակը», կամ «աշխարհի Լոյսը», Յիսուս տակաւին աշխարհի եկած չէր Ղուկ. Բ. 7: Երկինք գոց էր, Յիսուսի բացուեցաւ երբոր ինք մկրտուեցաւ Մատթ. Գ. 16:

Անդամալոյծը մեղաւոր ու հիւսնդ էր, մեղաց թողութիւն նաեւ մարմնոյ բժշկութիւն ընդունեց Ղուկ. Դ. 20, 24-25:

Մարիամ Մագդալենացի դիւահար կին մըն էր, բժշկուելով Փրկչին յարութեան առաջին աւետարեքը եղաւ Ղուկ. Ը. 2, 3, ԻԴ. 10:

Գալիլիայի ծովը փոթորկալից էր. կատարեալ խաղաղութիւն եղաւ Քրիստոսի սաստելովը Ղուկ. Ը. 24:

Յիսուսի ոտքերը արցունքովը թրջող, իւզով օծողը մեղաւոր կին մը ցանցուած էր. հաւատքով փրկութիւն ընդունեց Ղուկ. Է. 37-50:

ժողովրդապետին դուստրը մնում էր, Յիսուս կենդանացուց զայն Ղուկ. Ը. 55:

Բարտիմէոս կոյր մըն էր, աչքերը բացուեցան Յիսուսի հրամանովը եւ իր հաւատքովը Մարկ. Ժ. 52:

Երեսունը ութը տարիէ ի վեր պառկած էր այս հիւսնդը, սակայն Փրկչին խօսքովը առողջացաւ ու իր մահիճը վերցնելով կը քալէր Յովհ. Ե. 5-9:

Մարդու մը ձեռքը չորցած էր, Տէրոջ «Ձեռքդ երկնցուր», հրամանին հաւատքով հնազանդելովը բժշկուեցաւ Մարկ. Գ. 1-5:

Մարդը խուլ ու դժուարախօս էր, սկսաւ լըսել ու խօսիլ Մարկ. Է. 32-35:

Մարդը բորոտ էր, մաքրուեցաւ Մատթ. Ը. 2, 3, ցովհաննէս Մկրտիչի գլուխը իր վրայ էր, անզուրկ Հերովդէսի հրամանով զլխատուեցաւ Մատթ. ԺԴ. 10:

Մաղքոսին ականջը Պետրոս կտրեց ու հանեց, սակայն Յիսուս իր տեղը դրաւ զայն Յովհ. ԺԸ. 10:

Պետրոս իր Տէրը ուրացող աշակերտ մըն էր, Փրկչին սիրոյ մէկ ակնարկովը զղջալով դառնաւ պէս լացաւ Ղուկ. ԻԲ. 57-62:

Թովմաս Թերաֆուատ էր, իր մատները Տէրոջ բեւեռներուն տեղերը դնելով հաւատացեալ աշակերտ մը եղաւ Յովհ. Ի. 27-29:

Պողոս՝ ապագայի նշանաւոր առաքեալը եւ կեղեցին հալածող Սաւուղն էր Գործ. Թ. 1-9:

Ստեփանոս նախաձկան Աստուծոյ կ'աղօթէր, քարկոծման ներքեւ ննջեց Գործ. Է. 59:

Պետրոս բանտին մէջ կը գտնուէր, Տէրոջ հրեշտակը զայն դուրս հանեց Գործ. ԺԲ. 5-10

Լիդիայի սիրտը գոց էր, Տէրը բացաւ ու հաւատքով փրկուեցաւ Գործ. ԺԶ. 14:

Կախարդները իրենց գիրքերը մեծապէս կը յարգէին, Յիսուսի հաւատալով զանոնք այրեցին Գործ. ԺԹ. 19:

Պոպղիոսի հայրը ջերմով ու Թանջքով պառկած էր, Պողոսի աղօթքովը Տէրը բժշկեց զայն Գործ. ԻԸ. 8:

Միայն վայրկեան մը առաջ մեղաւոր կորուսեալ հոգի (ո՛հ, ինչ մեծ քաջալերութիւն) վերստին ծնանելով, վայրկենական փոփոխութեամբ շնորհքով փրկուած հաւատացեալ մը կրնաս ըլլալ:

Միայն վայրկեան մը առաջ հիւանդ, բանտարկեալ, Թերաֆուատ, սակայն Փրկչի Յիսուսի հպումովը՝ իսկոյն բժշկութիւն, ազատութիւն ու հաւատք կ'ընդունիս:

Միայն վայրկեան մը առաջ փորձութիւններ, ոգեր, վիշտեր կրնան քեզ խոռովել ու Գալիլիայի ծովուն նման փոթորիկ յարուցանել եւ Պետրոսի նման քեզ ընկղմել, սակայն խաչեալ ու յարուցեալ Փրկչին հաւատքով միայն մէկ ակնարկ կ'ազատէ քեզ ամէն ծանրութենէդ ու տաքնապէդ եւ կրնաս կատարեալ խաղաղութիւն վայելել իր մէջ:

«Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի, ու պիտի փրկուիս դուն եւ քու տունդ»: Գործ. ԺԶ. 31:

ԲԻԻԶԱՆԴՈՒՆԻ Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆՍ

Ծնած եմ 1905ին Խարբերդի Սարըխամիշ գիւղին մէջ. մանկութեանս օրերուն ըստ մօրս փափաքին, (որ ջերմեռանդ քրիստոնեայ մըն էր), կանուխ դպրոց յաճախել սկսայ. ուսուցիչը քարոզիչ մ'ըլլալուն կիրականօրեայ ժողովներ ունէինք ուր մեր ծնողաց հետ միասին կ'երթայինք Աստուծոյ խօսքը լսելու: Ես փոքր ըլլալուս Աւետարանը ըստ իմ կարծիքիս «հասկցած» էի եւ այնպէս կը կարծէի թէ ան որ Աստուծոյ կը հաւատայ ոչ մէկ փորձութիւն իրեն վնաս մը պիտի հասցնէ. այս կէտը այն աստիճանի զրաւած էր իմ մատաղ միտքս, որ մեր տեղահանութեան օրը երբ ամբողջ գիւղը իրար անցած էր, մայրս դրացիներու հետ միասին կուլային եւ կ'ողբային. ես իրենց այդ աստիճանի իրար անցնիլը տեսնելով պատճառը հասկնալ ուզեցի եւ երբ ինձ պատասխանուեցաւ թէ թուրքերը մեզ պիտի տեղահանէին քանի մը մղոն հեռու մեզ կորսնցնելու նպատակաւ, ես ամենայն վստահութեամբ Յովհաննու աւետարանը զրպանէս հանելով իրենց ցոյց տուի եւ ըսի որ քանի որ այս աւետարանը վրաս ունէի, ոչ ոք կարող էր մեզ վնաս մը հասցնել. քանի որ Քրիստոս Ինքը ըսած է թէ «Ան որ Ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի» (Յովհ. ԺԱ. 25). ուրե՛ն կարեւորութիւն չունի թուրքէն եկած մահը: Այս հաւատքով հաստատուած տեղահանուեցանք, և Տէրը ուզեց որ ես ապրիմ: Սակայն աւա՛ղ որ այդ մանկական հաւատքը իմ մէջս հաստատուն չի մնաց. ինը տարիներու ընթացքին որ թափառեցայ թուրքիոյ մէջ, նախ կասկած դէպի իմ այնքան սիրած Աւետարանը, յետոյ անհաւատութիւն գիս զրաւեց, այնպէս որ քսան տարեկան հասած ատենս Աստուած բառը ինձ համար ամէն նշանակութենէ զուրկ էր. այս վիճակիս մէջ քրոջս Սուրիա գտնուիլը իմանալուս անմիջապէս մեկնեցայ Սուրիա, եւ քանի որ իմ ամբողջ կեանքս զեղխութեամբ անցած էր թուրքիոյ մէջ առանց մէկ ստակ աւելցնելու. ուստի ստիպուած կարաւանին հետ ոտքով քալեցի մինչեւ Ճարապուս, ուր ինձ հետ գտնուող հայրենակից մը խղճաց իմ վիճակիս վրայ և շոգեկառքի ծախսը վճարելով Հալէպ ձգեց զիս. մինչ այդ ոչ ոք ինձ Յիսուսի մասին վերախօսած էր. զաղթական հայութեան մէջ կարծես կրօնք բառը բոլորովին մեռած էր:

Յրանսա գալէս յետոյ ատեն մը քեռայրիս հետ միասին ապրեցայ Քեռայրս հաւատացեալ

էր եւ իր խօսքերը իմ սրտիս վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէին եւ նոյնիսկ շատ անգամ այն աստիճանի կը յուզուէի որ չէի կարող իմ արցունքներս զսպել, բայց քանի մը վարկեան յետոյ արտաքին մարդը յաղթած էր, եւ ես այդ իմ քանի մը վարկեանի յուզումս խենդութեան կը վերագրէի: Սակայն ինչ որ ալ ընէի չէի կարող բոլորովին հանգիստ ըլլալ. կ'զգայի որ ինձ բան մը կը պակսի, բայց այդ «բան»-ին ինչ ըլլալը չէի գիտեր, ուրեմն երբ կուսակցութեանց մասին լսեցի, կարծելով թէ այդ միջոցաւ պիտի կրնայի պակասը լեցնել, ուստի ամէն ուժովս նետուեցայ գիրկը կուսակցութեանց եւ... շատ չանցած իմ ինչ ըլլալս հասկեցայ. քանի որ կուսակցութիւնն ալ այդ պակասը չէր կարող լեցնել, ուրեմն ինձ կը մնար ուտել, խմել եւ զուարճանալ. կը խորհէի որ երբ ասարդ եմ, գործ ունիմ, նաեւ ֆիզիքապէս առողջ եմ, ուստի եւ ոչ ոք ինձմէ զօրաւոր էր: Բայց անողոք հիւանդութիւն մը, թոքախտը երեւան եկաւ իմ մարմինիս մէջ: Թէ ինչ ցաւ զգացի, ինչ աստիճանի բարկութիւնս բորբոքեցաւ Աստուծոյ հանդէպ. այն Աստուածը որ մինչեւ այդ անտեսած էի այդ վարկեանին իմ աչքիս ահաւոր թշնամիի մը նման երեւցաւ: Իմ կարծիքով Աստուած ինծի ամէն փաստ հասցնելէն յետոյ այժմ վերջին հարուածը կուտար: Բարեկամներս, զիս տեսնել եւ կողոնկէն ոչ ոք չի նշմարեց տազնապս, որովհետեւ կ'ուզէի «քաջ» մնալ, սակայն իրականութեան մէջ ինքզինքս յաղթուած կ'զգայի: Ինձ համար այս ամէն թշուառութեանց պատճառը ուրիշ մը չէր, եթէ ոչ Աստուած: Տարօրինակ բան, ամենամահաւատը նոյնիսկ իր ամենավերջին ժամուն Աստուծոյ գոյութիւնը կը հաստատէ նոյնիսկ իր անխրաւ բողոքներով. նոյնը պատահած էր ինձ. հակառակ իմ անաստուած կեանք մը ապրելուս, հակառակ Աստուծոյ դէմ պայքար մղելուս, կ'ուզէի որ Աստուած ինձ հանդէպ շատ քաղցրօրէն վարուի: Իմ մէջս ատելութիւն մը ծագեցաւ քրիստոնէութեան հանդէպ, նոյնիսկ իմ ազգականներուս, նոյնիսկ իմ մէկ հատիկ քրոջս հանդէպ: Խեղճ քոյր, նա որ իր կարելին ի գործ դրած էր ինձ օգնութեան հասնելու, այժմ ինձ ատելի էր, քանի որ թէ ինք եւ թէ իր ամուսինը հաւատացեալներ էին. այն ամբողջ միջոցին որ հիւանդանոցը մնացի, իմ օրերս կ'անցնէին ուրիշ տեսակ մը մեղքով լի: Գործիկը մինչեւ իրիկուն հիւանդներու հետ խեղկատակելով, այցելութեան օրը իմ ազգականներս խաբելով կ'անցնէր. իսկ գիշերը

սարսափելի էր ինձ համար, ինչպէս ըսի, մարդկութեան եւ Աստուծոյ հանդէպ ատելութեամբ լեցուած էի եւ գիշերները երկարատեւ անքուն կը մնայի խորհելով եւ սրտիս մէջ անէծք թափելով եւ երբ ակնարկ մը կը ձգէի իմ շուրջս դանդաղ հիւանդներուն վրայ, որոնք ծածկուած էին ճերմակ վերմակներով, ակամայ սարսուռ մը կ'զգայի. թէ ինչո՞ւ, չէի գիտեր, և շատ ուշ հասկեցայ որ հակառակ իմ կամքին որ անտարբեր կը ձեւանայի, բայց իրականութեան մէջ մահէն էր որ կը վախնայի: Օր մը երբ մահիճիս վրայ պառկած կը խորհէի, հայ ծեր կին մը ներկայացաւ ինձ եւ ներողութիւն խնդրելով քովս նստաւ եւ իմ առողջութեանս մասին հարցնելէ յետոյ հոգիիս մասին ալ հարցուց: Անկեղծ ըլլալու համար պատասխանեցի թէ ես ոչ մէկ հաւատք կ'ընծայէի հոգիին: «Թոյլ տուր քանի մը առողջ կարգամ այս Գիրքէն» ըսաւ: Պէտքութիւն չկայ, պատասխանեցի անհամբերութեամբ: «Թոյլ տուր ուրեմն քեզի համար աղօթեմ» աւելցուց խեղճ կինը, իսկ ես փոխանակ մտիկ ընելու, սոսկալի նեղացայ եւ ըսի որ իմ մայրս ինձ համար շատ աղօթած էր ժամանակին, այսու հանդերձ իր բոլոր աղօթքներուն Աստուած ոչ մէկ պատասխան տուած էր, և չէր ալ կարող քանի որ գոյութիւն չունէր: Այս ըսելով ես ինքս մահիճէս հեռացայ թողելով խեղճ պառաւր սոսկալի տխրութեան մը մէջ. եւ երբ մեկնեցաւ, իմ քովէս անցած ժամանակ ինձ սիրով լի ակնարկ մը նետեց և մըրմընջեց, «Ջաւակ, յաւիտենականութեան վրայ խորհիլ»: Այս վերջին հարուածն էր որ ստացայ եւ այս հարուածը ինձ համար փրկարար եղաւ: Աստուած այնպէս ուզած էր որ այդ ծեր կինը սրտիս ամենանուրբ թելին դպչի եւ ես այդ իրիկունէն սկսեալ ակամայ յաւիտենականութեան վրայ խորհեցայ: Երկար ամիսներ այդ զաղափարին դէմ պայքարեցայ, որովհետեւ ես ինքզինքս համոզուած անհաւատ մը կը նկատէի, եւ անհասիկ ծեր կնկան մը մի քանի բառերը զիս տակն ու վրայ ըրին: Խիղճս հանդարտեցնելու համար Մարտէյլէն հեռանալէս յետոյ Ս. Գիրք մը ուզեցի եւ սկսայ ուշադրութեամբ կարդալ ոչ թէ հաւատալու, հապա անոր մէջ զիս հանդարտեցնող բառ մը գտնելու. ես կը կարծէի նոյնիսկ քրիստոնէաներու այդ միակ նեցուկը իմ զաղափարին ծառայեցնել:

Օր մը հանդիպեցայ Յիսուսի տառապեալներու ուղղած կոչին, «Եկէք ինծի բոլոր յոգնած եւ բեռնաւորուածներ, եւ Ես ձեզ պիտի հանգնեցնեմ»: Այո, Յիսուսի երթալ, Անոր իմ ամ-

բողջ թշուառ կենանքս յայտնել եւ թողութիւն խնդրել իմ բազում մեղքերուս: Օր մը Յիսուսի հետ խաչուող աւագակի պարագան իմ ուշադրութիւնս գրաւեց: Քանի որ Յիսուս այդ աւագակին ներած էր, ուստի կարող է ինծի ալ ներել, զիս մաքրել եւ զիս ազատել իմ այս տըխուր վիճակէս: Ասոր վրայ օր ըստ օրէ ջանացի աւելի ուշադրութեամբ կարդալ Աւետարանը եւ երբեմն ալ աղօթել: Ուրախ եմ որ Տէրը իմ այդ տկար աղօթքներս կը լսէր եւ զիս օրէ օր կը քաջալերէր. այժմ իմ մէջս պայքարը շատ մեղմացած էր, միայն մէկ պարագայ մը արգելք կ'ըլլար ինքզինքս Տէրոջ յանձնելու, այն ալ ընկերներէ ամօթս էր. կ'ամչնայի եկեղեցի երթալ, որովհետեւ ինձ ծանօթներ շատ էին այդ գիւղին մէջ եւ բոլորն ալ գիտէին իմ եկեղեցւոյ եւ Աստուծոյ դէմ ունեցած ատելութիւնս, ուստի պիտի ծիծաղէին իմ վրաս, բայց Տէրոջ կամքը տարբեր էր. նա սկսած էր իմ մէջ բարի գործը եւ կը շարունակէր: Նա ոչ միայն թող չտուաւ որ Սատանան իմ տկար հաւատքս ամչկոտութեամբ ու վախկոտութեամբ խարքալէ՝ հապա շնորհքը ըրաւ ինձ կարենալ շահելու ընտանիքիս սիրտը դէպի Յիսուս եւ շատ չանցած երկուքս միասին կ'աղօթէինք եւ Տէրը կ'օրհնէինք իր ձրի շնորհքին համար: Այդ ատենէն ի վեր մօտ երեք տարի անցած է երբ վերջին անգամ ըլլալով ջերմ աղօթքով մը ինքզինքս ընտանիքիս եւ զաւակներուս հետ Տէրոջ յանձնեցի: Այս երեք տարուայ ընթացքին փորձութիւնները ոչ մէկ ատեն պակսած չեն իմ վրայէս: Երկար ատեն անգործ մնալէ յետոյ հազիւ գործի սկսած՝ իմ հիւանդութիւնս կը ծանրանար եւ Մարտ 1, 1953ին փոխադրուեցայ Helfuntի լեռնահիւանդանոցը ուր այս տողերս կը գրեմ ճիշդ տարի մը յետոյ: Իմ հիւանդութեանս պատճառաւ ընտանիքս երկու զաւակ պահելու անկարող ըլլալուն (քանի որ անգործ էր) մեր առջինեկը հիւանդանոց դրկեցինք, եւ ճիշդ այս տողերս գրած պահուս ընտանիքս սոսկալի ջերմով կը տառապի եւ ստիպուած երկրորդ պատիկն ալ կառավարութեան խնամքին յանձնելու ջանքեր կ'ընենք: Սակայն այս ամէն փորձութիւններուն մէջ ոչ մէկ օր սիրտս մթապնած է, Տէրը իր երկնային խաղաղութիւնը ինձ տուած է եւ միշտ ալ ինծի հետ է եւ ես վստահ կ'ըսեմ «Այս ամէն բաներուն մէջ ալ աւելի յաղթող կ'ըլլանք» հաստատ համոզուած ըլլալով որ, «Ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուծոյ կը սիրեն»:

ՅԱԿՈԲ ԹՈՒԽՄԱՆԵԱՆ

ԿԵՆԱՅ ԱՄՈՒՆԵՐԷՆ

ԱՄԷՆԸ Ի ԲԱՅ ԱՌԵԱԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ձեռն պակսիր այնպիսիները՝ որ կը յայտարարեն թէ Աստուծոյ հետ հաշտ են, առանց հաւանած ըլլալու Յիսուս Գրիստոսի պայմաններուն:

Տիկին մը այցելութեան գնաց Յովհաննէս անուն խեղճ մարդու մը, զոր շատ հիւանդ վիճակի մը մէջ գտաւ:

Քանի մը վայրկեան անոր առողջութեան մասին խօսելէ ետք, տիկինը կրօնական նիւթերու սկսաւ: Հիւանդը առանց վարանելու յայտարարեց թէ այդ մասին հանդարտ էր եւ թէ մեռնելէն չէր վախնար, վասնզի ուէ՛ մէկին բնաւ չարիք ըրած չէր:

Տիկինը առանց բան մը ըսելու ունկնդրեց Յովհաննէսի, որ իր բոլոր առաքինութեանց ցուցադրութիւնը ըրաւ. յետոյ անոր առաջարկեց Սուրբ Գիրքէն քանի մը հատուած կարդալ: Նա առարկութիւն չըրաւ եւ տիկինը շատ զանդաղ եւ շեշտերով կարդաց Հոով. Գ. 9 էն սկսեալ.

«Ուստի ալ ի՞նչ ըսենք, բանով մը աւելի՞ ենք. իրաւ որ բանով մըն ալ չենք. վասնզի առաջ մեղադրեցինք հրեաները եւ հեթանոսները թէ ամէնը մեղքի տակ են... ի բաց առեալ ցովհաննէս:

Ինչպէս գրուած է թէ արդար մը չկայ եւ ոչ մէկ... ի բաց առեալ ցովհաննէս:

Մէկը չկայ որ հասկնայ, մէկը չկայ որ զԱստուծոյ փնտռէ... ի բաց առեալ ցովհաննէս:

Ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան, աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ... ի բաց առեալ ցովհաննէս:

Սակայն գիտենք որ օրէնքը ինչ որ կ'ըսէ, անոնց կ'ըսէ՝ որոնք օրէնքին տակ են, որպէսզի ամէն բերան գոցուի, եւ բոլոր աշխարհ զատապարտուած ըլլայ Աստուծոյ առջեւ... ի բաց առեալ ցովհաննէս:

Վասնզի Ասոր առջեւ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը... ի բաց առեալ ցովհաննէս:

Քանզի խտրութիւն չկայ, վասնզի պէ՛նը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսած են, եւ անոր շնորհքով ձրի կ'արդարանան Գրիստոս Յիսուսով եղած փրկութիւնովը... ի բաց առեալ ցովհաննէս:

«Կեցէք, կեցէք, Տիկին», աղաղակեց հիւանդը անձկալից ձայնով մը:

Տիկինը ինքզինք զարմացած ձեւացնելով թէ ի՞նչ ունէր, յետոյ աւելցուց, «Ես միայն կը

Հանամ մէկտեղ բերել ինչ որ դուք կ'ըսէք եւ ինչ որ Աստուած կ'ըսէ: Աստուած կ'ըսէ, ամէնը մեղք գործեցին: Դուք կ'ըսէք թէ բնաւ Հար բան ըրած չէք, ուստի ասկա ըսել է, Ամէնը, ի բաց առեալ Յովհաննէս:

Այցեկուն քանի մը խօսք եւս ըսաւ եւ մեկնեցաւ հիւանդին քովէն:

Քանի մը օր ետքը երբ Տիկինը զայն վերատին այցելեց, անոր դէմքը զուարթ տեսնելով զարմացաւ: Նա անհամբեր կ'սպասէր Տիկինին այցելութեան, պատմելու համար այն ազդեցութիւնը որ ըրած էր իր վրայ անոր Սուրբ Դիրքէն կարգացած խօսքերը: Իր աչքերը բացուած էին եւ տեսած էր թէ ինչ էր իր իրական դիրքը Աստուծոյ հանդէպ ու ընդունած էր Յիսուսը որպէս միակ անձը որ զինք կրցած էր արգարացնել Աստուծոյ առջեւ: «Ճշմարիտ ուրախութիւնը եւ խաղաղութիւնը» ըսաւ ան, «լեցուցին իմ սիրտս անկէ ի վեր որ ինքզինքս Փրկչին յանձնեցի»:

Քանի մը օր ետքը հիւանդը կը մեռնէր, փառաբանելով Անոր անունը որ մեղաւորներուն բարեկամն է եւ որ ըսաւ, «Ես արդարեւ կ'անչեւ լու չեկայ, հապա մեղաւորները ապաշխարութեան»:

Թարգ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

ԵՐԵՔ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Օրին մէկը երեք հոգի անձանութներ

Մարդի մը վրայ ծովեզերքէն քիչ մ'անդին
Նստած միասին տրտում տխուր խօսքի բռնուին
Ընկճած բոլորն բեռան ներքեւ ծանր վըշտին
Առանց ճիգի շուտով զառնան իրար ընկեր:

Իրենց առջեւ կը պարզուին զմրուխտ մարգեր
Հոն՝ տարածուի մէկ անսահման կապուտակ ծոփ
Վարը փայլի հսկայ արեւն իր մեծ փառքով,
Անդ՝ հորիզոն կարմիր, հագնի շառագնէտով,
Ի՛նչ փոյթ անոնց, անոնք երբեք չեն գրաւեր:

Անոնք հիմա զրաւած են այլ խորհուրդներ,
Կը փափաքին իրար ճանչնալ, սրտեր կարգալ,
Ներքնաշխարհի տեսարաններ կ'ուզեն տեսնալ,
Իրար վշտի պատճառներուն ծանօթանալ,
Ուստի իսկոյն անկեղծօրէն բացուին սրտեր:

Առաջինը խօսի աշպէս, «Հարուստ էի,
Մեծափարթամ, իմ ստացուածք եւ կալուածներ,

Իմ պալատներ, ոսկի շէղջեր, վառ գոհարներ
Անթիւ էին եւ թանկագին, եկան օրեր
Երբ բոլորէն ա՛հ զրկուեցայ, կորսնցուցի՛»:

Երկրորդ անձը խօսի աշպէս, «Ուրախ էի
Եւ երջանիկ. իրաւ է թէ ոսկի շէղջեր
Եւ գոհարներ ես չունէի, իմ զաւակներ,
Իմ համեստ կին, հայրիկս, մայրիկս եւ եղբայրներ
Միասին էինք, սիրով կապուած, կորսնցուցի՛»:

Իսկ երրորդը խօսի աշպէս, «Կ'աղօթէ՛ի,
Փոքր ատենս մայրիկս պատմէր շատ մը բաներ
Իր Սբ. Դիրքէն սիրուն սիրուն պատմութիւններ
Հաւատարի թէ կար Աստուած եւ հրեշտակներ,
Սակայն հիմա չունիմ հաւատք, կորսնցուցի՛»:

Յայնժամ միւսներն ըսին անոր շէշտով մ'տխուր
«Մեր կորուստներն մեծ են իրաւ եւ ողբալի,
Քուկինդ սակայն ահաւո՛ր է, սարսափելի՛,
Պէտք է գիտնալ որ կորուստը սուրբ հաւատքի
Մեծագոյնն է կորուստներու, ո՛վ սգաւոր»:

Վեր. Մ. ՏԻՐ ՍՕՀԱԿԵԱՆ

Ալֆօրվի

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՆ ՄԷՋ

ՅԻՇՈՒԱԾ ԵՆ

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը հ. 1:

— վկայութիւնը հ. 2, 9:

— հաւատարմութիւնը հ. 5:

— մահը հ. 5, 18

— յարութիւնը հ. 5, 18:

— սէրը հ. 5:

— քաւութիւնը հ. 5:

— երկրորդ զալուստը հ. 7:

— աստուածութիւնը հ. 8:

— մարդկութիւնը հ. 13-16:

— նեղութիւնը հ. 9:

— արքայութիւնը հ. 9:

— համբերութիւնը հ. 9:

— փառքը հ. 13-16:

— յաւիտենականութիւնը հ. 18:

— դատաւորութիւնը հ. 18:

— յարաբերութիւնը իր եկեղե-

ցիին հետ հ. 13-20:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՈՒՅ ՄՕՆՕ

ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾՆ ՈՒ ՄԱՀԸ

Քարոզի մը մէջ Մօնօ ցուցուցած էր թէ խաչի, տառապանքի կեանքը՝ ճշմարիտ կեանքն է ամէն մէկ քրիստոնէին, մանաւանդ Աստուծոյ խօսքին ծառային: Այդ քարոզը վերջացուցած էր սա խօսքերով. —

«Եթէ Տէրոջ կողմէն ձեր վրայ դրուած խաչերուն մէջ կայ հատ մը, որ ձեզի կը թուի թէ ձեր պաշտօնին համար արգելք մըն է, այո՛, կը թուի ձեզի նոյնիսկ թէ ձեր սուրբ կոչմանը նըկատմամբ ձեր ունեցած բոլոր յոյսերը կը մահացնէ, եթէ ներքին փորձութեան արտաքիններ ալ ընկերակցին, եթէ մարմին, հոգի եւ սիրտ վիրաւորուած են, կարճ եթէ ամէն բան անդառնալիօրէն կորսուած կը թուի, ընդունեցէ՛ք նաեւ այս խաչը... խաչի ամբողջ բեռը՝ խոնարհ, յուսալից, շնորհակալ մտքով մը՝ իբր աշխատի տառապանք մը, որուն մէջ Տէրը ձեզի բոլորովին նոր կոչում մը պիտի ցուցնէ, ողջունեցէ՛ք զայն իբր վշտի ու տկարութեան պաշտօն մը, զոր Աստուծոյ իբր ամենէն ընտիր պաշտօնը ձեր վերջին օրերուն համար խնայած է եւ զոր Անիկա կեանքի պտուղներով աւելի առատօրէն պիտի օրհնէ, քան թէ ձեր նախկին ծառայութիւնը՝ կատարուած զօրութեամբ եւ ուրախութեամբ»:

Մօնօ այս նախադասութիւնները արտասանած էր 1854ի Ծնունդին, երբ նա թէեւ դեռ բեմի վերայ՝ արդէն կը տառապէր իր ահեղի հիւանդութենէն: Բիշ ետք ասիկա ստիպեց զինք՝ քաշուելու այն գործէն, որուն նուիրուած էր իր ամբողջ էութեամբ, եւ դամուելու անկողին: Սակայն նա կրեց այդ խաչը իր վերի թելադրութեան համաձայն «խոնարհ, յուսալից ու երախտագէտ սըրտով» եւ գործնականացուց սա խօսքը, «Ով ցաւ, պիտի ստիպեմ քեզ խոստովանելու թէ դուն բարիք մըն ես»:

Այո՛, այդ վայրագ հիւանդութիւնը բարիք մը եղաւ եւ ատով անգամ մըն ալ ապացոյց տըրեցաւ թէ «Աստուծոյ զօրութիւնը տկարութեան մէջ կը կատարուի»: Անիկա բարիք մը եղաւ նախ Մօնոյի համար. անոր աղօթքներն ու խօսքերը, որոնցմէ մի քանի հատ թարգմանաբար ներկայացուցինք «Բանբեր»ի Յունիսի թիւին մէջ, կը ցուցնեն թէ տառապանքի միջոցով որչա՛փ զօրացաւ Մօնոյի հաւատքը Աստուծոյ սիրոյն վը-

րայ, որչա՛փ կատարելագործուեցաւ անոր հընազանդութիւնն ու անձնատուութիւնը իր Տէրոջ կամքին, որչա՛փ խորացաւ անոր սէրը առ Աստուած ու առ մարդիկ եւ որչա՛փ բարձրացաւ անոր հոգւոյն խաղաղութիւնը՝ հակառակ մարմնական մոլեգին ցաւերուն:

Երկրորդ, Մօնոյի հիւանդութիւնը բարիք մը եղաւ նաեւ Աստուծոյ գործին համար: Իր կեանքի վերջին, տառապալի՛ց տարուան մէջ անոր շնորհուեցաւ իր Տէրոջ առաջնորդելու աւելի շատ հոգիներ, քան թէ իր պաշտօնավարութեան ամբողջ շրջանին, իր առողջ օրերուն: Անիկա կրցաւ զայս ընել նախ իր կեանքին օրինակովը եւ երկրորդ իր ժողովներովը, որոնց վրայով կ'արժէ մի քանի համառօտ տեղեկութիւններ աւելնթեցողին:

Մինչ Մօնօ արդէն վեց ամիս փակուած մընացած էր իր սենեակին մէջ եւ զրկուած՝ իր նուիրական գործէն՝ 6 Հոկտ. 1855 ին իր 7 եղբայրներն ու 4 քոյրերը իրենց զաւակներուն հետ միասին իր մահիճին քով հաւաքուեցան ընտանեկան տօնակատարութեան մը համար: Կարճ ժողով մը ունեցան եւ ճաշակեցին տէրունական ընթրիքը: Այդ առթիւ կենաց Հոգին մասնաւոր զօրութիւն մը տուաւ Մօնոյի կիսամեռ մարմնոյն եւ զայն մղեց Հոգմ. Ը. զուլսը իբր բնաբան առնելով կարճ քարոզ մը խօսելու: Աս «հնչեց ունկնդիրներու ականջին փրկութեան վսեմ խըմբերգի մը պէս»: Երբ իր եղբայրներն ու քոյրերը Մօնոյէն կը բաժնուէին, անոր հրաժեշտի խօսքերն եղան. —

«Որչա՛փ կը փափաքէի առողջանալ, որքան որ ինքզինքս կը ճանչնամ, այս բաղձանքս մաքուր է. մասնաւոր գիտակցութիւն մը ունիմ թէ իմ պաշտօնս դեռ անկատար է: Պէտք է որ ես դեռ շատ ժամանակ ունենամ այն բոլոր օրհնութենէն յետոյ, զոր հիւանդութիւնս ինծի բերած է, որպէսզի կարենամ գործնականացնել իմ մէջ տածած սուրբ խորհուրդներս»: Ապա այդ իրիկունը յաճախ լսուեցաւ որ անիկա կ'աղօթէր, «Ով իմ Աստուծաւ, իմ պաշտօնս ինծի վերադարձուր, իմ պաշտօնս ինծի վերադարձուր, եթէ կարելի է իմ պաշտօնս ինծի վերադարձուր, կամ Քու քաղցրութեամբդ ենթարկէ զիս Քու կամքիդ»:

Տէրը լսեց այս խնդրանքը եւ անոր կարողութիւն տուաւ Հոկտ. 14 էն (1855) սկսեալ մինչեւ Մարտ 30 (1856) գրեթէ վեց ամիս, ամէն կիրակի պաշտամունքներ կատարելու՝ իր սենեակին մէջ: Հոս կը հաւաքուէին Մօնոյի ընտանիքէն զատ 30-40 մարդիկ: Ասոնք միշտ միեւնոյն ան-

ձերը չէին: Քանի որ տեղը նեղ էր եւ կարելի չէր միեւնոյն օրը մեծ բազմութիւն ընդունիլ, կիրակի մը մէկ խումբ ներս կ'առնուէր, միւս կիրակին ուրիշ մը: Ասով պատեհութիւն կը տըրւէր որ ըստ կարելւոյն շատ մարդիկ լսէին տառապանքի հալոցէն անցնող Մօնոյի վերջին խօսքերը: Պաշտամունքին կ'առաջնորդէին փոփոխակի կերպով Փարիզի բոլոր հաւատացեալ հովիւները՝ առանց դաւանական խտրութեան. առանց արձնն ալ եղբայրներ կը նկատուէին, խնդիր չէ թէ անոնցմէ մին բարեկարգեալ, միւսը լուտերական, երրորդ մը մէթոտական էւն. եկեղեցւոյն պաշտօնեան էր: Այսպէսով Մօնոյի մահիճը առիթ կ'ընծայէր մշակելու քրիստոնէական լայնախոհութեան ու համերաշխութեան ոգին:

Պաշտամունքը շատ պարզ էր. երգէ ու աղօթքէ յետոյ օրուան առաջնորդ հովիւը տէրունական ընթրիքը կը մատակարարէր և ապա Մօնօ կը խօսէր բնաբանի մը վրայ, որ իր մասնաւոր ուշադրութեան առարկան եղած էր: Կը խօսէր յաճախ միայն կարճ նախադասութիւնէ մը յետոյ, — քանզի շատ անգամ ցաւերը զինքը ամբողջ շաբաթը հանգիստ չէին ձգեր — այսու ամենայնիւ իր խօսքը խաղաղութիւն, սէր եւ հաւատք կը ներշնչէր բոլոր ունկնդիրներուն, վասնզի մահամերձ եղբայր մըն էր որ իր խորունկ փորձառութենէն քրիստոնէական յորդորներ կուտար իր եղբայրներուն:

Այդ քարոզները Մօնոյի գաւազներուն կողմէ նօթագրուած են եւ ապա հրատարակուած զըրփոյկի մը ձեւով, որուն վերնագիրն է «Adieux» (Տէրն ընդ Ձեզ): Շատ քիչ գիրքեր այնքան խոր ազդեցութիւն ձգած են, որքան Մօնոյի այդ վերջին քարոզները: Անոնք զօրաւոր վկայութիւններն են Աստուծոյ մէկ հրաշքին եւ մեզի կը ցուցնեն թէ ինչպիսի՝ խոր ուրախութիւն և ինչպիսի՝ կենսաբաշխ կորով կրնայ պարգեւել Տէրը նոյնիսկ մահուան ցաւերով տառապողի մը:

Քարոզներուն պատրաստութիւնը եւ խօսիլը առհասարակ մեծ ցաւեր կը պատճառէին հիւանդին: Յաճախ ժողովներէն յետոյ ամենէն տառապալից ժամերը կ'անցնէր: Ինք զիտէր զայս, բայց սիրով կը համակերպէր:

Կիրակի իրիկուն մը այսպէս կը հառաչէր, «Շատ կը տառապիմ, բայց այսպէս ըլլալու է կիրակիէն երկուշաբթի լոյս զիշերը. ասիկա զոհ մըն է, զոր ես իմ Աստուծոյ սիրով կը մատուցանեմ»: Եւ անգամ մըն ալ կ'աղօթէր, «Եթէ ես ամէն շաբաթ կրկնապատկուած ցաւերու տո-

կալով միայն արտօնութիւն պիտի ստանամ Քու խօսքդ քարոզելու, այն ատեն ալ ոչ թէ իմ, հապա քու կամքդ թող ըլլայ»: «Կիրակի մը իր քարոզը սկսաւ սա խօսքերով, «Այս առտու շատ տառապած եմ, կը վախնայի թէ չպիտի կրնամ խօսիլ, բայց Աստուած զիս ազատեց ցաւերէն մէկ ժամուան համար, միայն ինծի թուլատրելու որ զինքը փառաւորեմ եւ իր շնորհքովը կատարեմ այս փոքր պաշտօնը, որ մեծ մխիթարութիւն կուտայ ինծի»:

Այսպէս հակառակ անոր որ իր հիւանդութիւնը օրէ օր կը ծանրանար, Տէրը ամէն կիրակի անոր կը պարգեւէր հարկ եղած մխիթարութիւնը, համբերութիւնը եւ զօրութիւնը՝ ծառայելու Աստուծոյ ժողովուրդին եւ անոնց մեծ օրհնութիւն ըլլալու:

Իր վերջին պաշտամունքը, որ յաւէտ աղօթք մըն էր, կատարեց իր մահուանէն միայն մէկ շաբաթ առաջ, Մարտ 30ին, (1856). այնքան տըկար էր որ իր ձայնը հազիւ կը լսուէր: Ճ. Սաղմոսը իբր բնաբան առնելով՝ խօսեցաւ իր ամենէն սիրելի՝ «Աստուած սէր է» նիւթին վրայ: Կարծես թէ ամբողջ քարոզը «Ալէլուիա» մըն էր նուիրուած Աստուծոյ սիրոյն: Ահա քանի մը խօսքեր. —

«Ես հիմա այժ ունիմ միայն Աստուծոյ սիրովը զբաղելու: Աստուած մեզ սիրեց. ահա Աւետարանի վարդապետութիւնը: Մենք ալ զԱստուած սիրենք. ահա անոր ամբողջ բարոյագիտութիւնը... Ես կը հաւաքեմ իմ ունեցած վերջին ուժերս Ձեզի հետ Աստուծոյ յաւիտենական ու անվախճան սէրը հռչակելու: Աստուած իմ, Որ սէր էս, Որ ինծի համար ըրած էս, կ'ընես ու պիտի ընես ամէն ինչ միայն սէրէ զրդեալ, կարող չեմ Քեզի բաւականաչափ շնորհակալ ըլլալ, երբ կը տեսնեմ այս եղբայրները, զորս սէրը հաւաքած է իմ, հիւանդիս, տառապեալիս, մահամերձիս շուրջը: Ես կ'ուրախանամ անոնց սիրովը: Որո՞ւ աւելի մեծ սէր ցուցուած է: Բոլոր մարդոց մէջ ես ամենէն ապերախտը եղած չպիտի ըլլայի, եթէ ես այդ սիրոյն համար անհուն շնորհակալ չըլլայի...: Սակայն ես աւելի շնորհակալ եմ քու սիրոյդ համար, որ զիս այդքան կը խոնարհեցնէ, բայց չձգեր որ իյնամ, եւ որ... երբեք չթերանար ինծի օգնելու, թէեւ ես յաճախ թերացած եմ հաւատքի ու համբերութեան մէջ:

«Աստուած իմ, շնորհակալ եմ Քեզի քու ձրի շնորհացդ համար, որով ներուած են ինծի իմ բոլոր մեղքերս, ինծի, որ մեղաւորաց զերէն

եմ, Բու գաւակներուդ յետինը, Բու ծառաներուդ ամենէն աղքատը, սակայն Դուն զիս շնորհքով ողորդած ես, եւ զիս գործածած Բու թագաւորութեանդ տարածման համար, նոյնիսկ իմ ծայրագոյն տխրութեանս ու ցաւերուս մէջ:

«Շնորհակալ եմ որ ինծի Փրկիչ մը տուած ես. Աստուած իմ, կը խոստովանիմ թէ առանց Անոր անդառնալիօրէն կորսուած պիտի ըլլայի եւ հիմա ալ ամենէն սոսկալի տարակոյսներու մէջ: Ես կը յենում միայն Անոր թափած արեան. իմ բոլոր արգարութիւնս, իմ բոլոր հոշակաւոր գործերս, գնահատուած ու փնտռուած քարոզներս իմ աչքերուս առջև միայն անմաքուր գգեստներու պէս են... բայց հիմա զիտեմ թէ Անիկա (Քրիստոս) եւ ես այնպէս միացած ենք որ Ան երբեք առանձինն ներս չպիտի երթայ ու զիս դուրսը չպիտի թողու:

«Աստուած իմ, շնորհակալ եմ Բեզմէ այս բարեկամներու հետ, որոնց նոյն իրաւունքն ու մըլխիթարութիւնը շնորհած ես, եւ որոնց Բու շնորհքովդ Սուրբ Հոգին տուած ես, ինչպէս ինծի...:

«Արդ Տէր, այս բոլոր բարեկամները Բու հալածական սրտիդ կը յանձնեմ Յիսուսի անունովը, Սուրբ Հոգւոյն միջոցովը. թող չգտնուի այս սէնեակին մէջ մէկը, որ պիտի զրկուած ըլլայ յաւիտենական բնակարաններէն...: Ով Աստուած, փրկէ մեզ բոլորովին եւ բոլոր կեանքը, որ դեռ մեզի կը մնայ, թող ամբողջովին Բու ծառայութեանդ նուիրուած ըլլայ...:

«Բու շնորհք ու խաղաղութիւնդ մեր ամենուն հետը թող ըլլայ մինչեւ, մինչեւ յաւիտեան»:

Ճիշդ շաբաթ մը ետքը, նոյն ժամուն, Աստուծոյ այս ծառան փոխադրուած էր իր Փրկչին քով, Որու համար գործած էր անձնուիրութեամբ ու անսպառ եւ որուն սիրոյն համար տառապած էր համբերութեամբ եւ երախտագէտ ոգիով:

Իրեններուն ուղղած իր վերջին խօսքերն եղան, «Յիշեցէք զիս միայն այնպէս որ յիշատակները ձեզ մղեն՝ միտք բերելու կենդանի Աստուածը: Ամէն բան Քրիստոսով, Սր. Հոգւոյն միջոցով, Աստուծոյ փառքին համար, ուրիշ ամէն բան ոչինչ է: Տէրը մօտ է ինծի... Տէրովը կը սպասեմ... կը հաւատամ Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Միածին Որդւոյն... կը հաւատամ Ս. Հոգւոյն»:

Դամբանականներուն վերջին խօսքն եղաւ, «Տէրը շնորհէ մեզի հաւատալու, ապրելու եւ մեռնելու, ինչպէս անիկա հաւատաց, ապրեցաւ ու մեռաւ»:

Տէրը օգնէ մեզի այդ ամենուն մէջ որպէսզի

մենք ալ կարենանք Պօղոս առաքեալի հետ երգելու յաղթութեան երգը, «Ո՛ւր է, ով մահ քու խայթոցդ, ո՛ւր է ով գերեզման, քու յաղթութիւնդ... գոհութիւն Աստուծոյ Որ մեզի յաղթութիւն կուտայ»:

X X X

(Վերջ)

ՊԱՏԱՆԵԱՅ

«ԷՄՄԱՆՈՒԷԼ»

Ճիշդ այն վայրկեանին երբ մէզի մօայլ
խաւարին ներքեւ՝
Մահապարտներու կոյր, շղթայակիր ամբոխն
հեւ ի հեւ՝
Այս օդիս դաժան իշխանին ձեռքով որպէս
գերեզար
կը մտրակուէր բոլոր դժոխքի անլոյս
սահանքներէն վար:

Օ՛հ, ճիշդ այդ պահուն, խոտացեալ Որդին
լուսով կենսավառ
Ծագեցաւ մեր մէջ որպէս փրկութեան
Արեւ մեծափառ:
Ու մահուան շուքի մէջ շրջագայող ամբոխն
անձկալի
Խոր զմայլումով յուզուած յորջորջեց զԱյն
Սքանչելի:

Եւ անկեղծօրէն սուրբ ազատութեան ետեւ
հառաչող
Խեղճ գերիներու հոծ բազմութիւնը ծրած
մինչեւ հող՝
Մարմնացեալ այդ վեհ Փրկիչ Աստուծոյն
ոտքերը զրկած
Ուժգնօրէն կոչեց զԱյն Խորհրդակից եւ
Հրգօր Աստուած:

Մենք թշուառներ ենք, մեր կեանքը դառն է,
մեր ճամբան անել,
Արդ, միայն Բեզի մենք կ'ապաւինինք
Ո՛վ էմմանուէլ.
Դարձիր մեզի Հայր յաւիտենական եւ
խաղաղութեան
Իշխան՝ Որուն սուրբ ձեռքերուն կուգենք
յանձնել ամէն բան:
ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՆԱԿ

ԻՆՇԻ ՊԵՏՔ ԵՂԱԾԸ

Միսինար մը չինական Շաքթու քաղաքը հասած էր նուիրման համար աւետարանական աղօթատեղիի մը, որուն շինութիւնը նոր աւարտած էր: Հաւատացեալ եւ հեթանոս յուզման մէջ էին այս դէպքին համար:

Նուիրման օրը բազմութիւնը կը լեցնէր փողոցները. պիտի տեսնէին ու լսէին այն որ Յիսուս Փրկիչը կը քարոզէր:

Խեղճ չինացի մը, 75 տարեկան եւ կոյր, որ արդէն աղմուկէն բան մը չէր հասկնար, հարցուց թէ ի՞նչ էր ատիկա, եւ երբ հասկցաւ խնդրեց որ զինքը պաշտամունքի տեղը տանին:

Բաւական ատենէ ի վեր հոն էր արդէն, երբ միսինարը Ս. Գիրքը բացաւ եւ սա համարը կարդաց.—

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի՝ հապա յաւիտենական կեանք ունենայ»:

Ծերունին այս խօսքերը երկնային պատգամի պէս ընդունեց: Ան ոտքի ելաւ եւ ծափ զարնելով պօռաց.—

«Տէ՛ր իմ, ճիշդ ատիկա է ինծի պէտք եղածը: ատոր համար է որ այսքան տարիներ աղօթած եմ»:

— «Դո՛ւրս», պօռացին սրահին մէջէն, «դուրս հանեցէք, խենթ է»:

— Ո՛չ, ո՛չ, ես խենթ չեմ, ես զիտեմ ինծի ինչ որ պէտք է եւ ինչ որ փնտրած եմ այսքան տարիներէ ի վեր: Ու նորէն նստաւ:

Հանդարտութիւնը վերահաստատուեցաւ եւ պաշտամունքը խաղաղօրէն շարունակուեցաւ: Մի քանի ամիս վերջ խեղճ կոյրը ներկայացաւ որպէսզի մկրտուի: Ըստ սովորութեան, իրմէ խնդրուեցաւ որ պատմէ թէ ինչպէս հաւատքի եկած էր, եւ ընդհանուր յուզման մէջ հետեւեալը պատմեց:

— «Քսանըհինգ տարեկանի մօտ էի երբ ուրիշ շատերու պէս ես ալ համոզուեցայ թէ կուռք պաշտելը պարապ բան է: Անհանգիստ եւ զրգալիս էի:

Առտու մը, երբ դաշտը աշխատելու կ'երթայի, տեսայ որ արեւելքէն արեւին կրակէ գունդը պերճաշուքօրէն կը բարձրանար: Երկրպագեցի անոր եւ աղօթեցի ըսելով, Ո՛վ արեւ, սրտիս վերայ եղձ ծառնութիւնը վերցուր:

«Իրիկուն եղաւ, եւ մինչ արեւը մայր կը մըտէր, դարձեալ աղօթեցի, Ո՛վ արեւ, անհետանանէ առաջ օրհնութիւն մը շնորհէ ինծի եւ վերցուր սրտիս վրայէն այս ծանրութիւնը:

«Շարունակեցի աղօթել այսպէս, բայց վրաս ծանրացող բեռը միշտ հոն էր: Ուստի խորհեցայ թերեւս լուսինը կրնար օգնել ինծի, եւ տասներկու ամիս լուսին աղօթեցի:

Սակայն ո՛չ արեւը եւ ո՛չ ալ լուսինը ինծի խաղաղութիւն տուին: Ուստի աստղերուն դիմեցի եւ տարի մըն ալ անոնց աղօթեցի, բայց չըւշաջողեցայ: Այն ատեն, յուսահատ, գետին փռեցայ օր մը եւ աղաղակեցի. եթէ աստղերէն անդին Աստուած մը կայ, ո՛հ, թող Ինքզինքդ յայտնէ ինծի:

«Պատասխան չեկաւ:

«Ես կ'ապրէի տխուր եւ յուսահատ. ծերացայ եւ կուրցայ: Բայց վեց ամիս առաջ աղօթարան մտայ օտար միսինարը լսելու համար: Հոն է որ սորվեցայ ճանչնալ այն մեծ Աստուածը Որ աշխարհը կը կառավարէ եւ Որ այնքան կը սիրէ մարդիկը: Ասիկա իմ տանիլ կրցածէս աւելի էր. ոտքի ելայ ու պօռացի. ճիշդ այս է ինծի պէտք եղածը:

«Եւ այսօր ես հոս եկած եմ Յիսուս Քրիստոսի եկեղեցիին մէջ մտնելու եւ Միմեծի պէս կրնամ ըսել, «Այ հիմա, Ով Տէր, արձակեալ քու ծառադ խաղաղութիւնով», քանի որ գտած եմ իմ Փրկիչս, եւ քանի որ Ասիկա վերցուցած է սրտիս վրայի ծանրութիւնը»:

••

Յիսուս տարի փնտռելէ վերջ խեղճ Զինացիին գտածը մեր մանկութեան օրերէն սկսեալ մեզի կը սորվեցուի. բայց դուն ալ կը պատասխանես անոր պէս, «Ճիշդ ատիկա է ինծի պէտք եղածը» երբ կը լսես.—

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ» խօսքը:

Ժամանակն է սիրելի, ժամանակն է Յիսուսը ընդունելու:



ՀՈՎԻՏԻՆ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԸ

Գեղեցիկ հովիտի մը մէջ, մեծ դղեակէ մը քիչ մը հեռու կը բարձրանար Ժազ Պոլթոնի ցածուկ խրճիթը: Հոն բնակող բարի ծերունին որ թէեւ կքած էր տարիքին պատճառաւ, այսու հանդերձ իր գեղեցիկ դէմքին վրայ կը կրէր (որ կը շրջապատէր ճերմակ մազերու պսակ մը) ժշտատեւ ուրախութեան եւ երջանկութեան արտայայտութիւն մը, ինչու որ իր սիրտը առ Աստուած սիրով եւ երախտագիտութեամբ լեցուն էր: Շրջակայքը նաեւ ամենէն սիրուած եւ յարգուած էր:

Օր մը մինչ դղեակին դուքսը ձիով կ'անցնէր Ժազի խրճիթին առջեւէն, ծերունին խնդրեց անկէ կանգ առնել, վասնզի կարեւոր բան մը ունէր ըսելիք:

— Ամենայն սիրով, պատասխանեց դուքսը, իր ձին կեցնելով, միայն թէ աճապարէ, քանզի շատ ստիպողական գործ ունիմ:

— Շնորհակալ եմ, տէր իմ, ձեզի ըսելիքս երկար չէ: Այս գիշեր երազ մը տեսայ որ անտարակոյս ձեզի կը վերաբերի: Երազիս մէջ երկնից դրան քով կեցած էի եւ մինչ հոն էի, լսեցի որ մէկ հրեշտակը միւսին կ'ըսէր, «Այս գիշեր զո՞վ բերելու կ'երթաս»: — «Հովիտին ամենէն հարուստ մարդը բերելու կ'երթամ» եղաւ պատասխանը:

— Տէր իմ, շարունակեց Ժազ, ես անմիջապէս ձեր վրայ խորհեցայ, որովհետեւ դուք էք հովիտին ամենէն հարուստ մարդը: Գիտեմ թէ ասիկայ լոկ երազ մըն է, սակայն եթէ երազս իրականանար...:

— Բանդ գնա, ըսաւ դուքսը Ժազին, կ'արժէ՞ր զիս կեցնել այս տխմարական խօսքերը ըսելու համար: Դուն որ ընդհանրապէս այնքան մը ողջախոհ ես, այսօր կը բանդագուշես:

Եւ դուքսը շարունակեց իր ճամբան. բայց ամբողջ օրը ծերունի Ժազին խօսքերը գլխուն մէջ կը շրջէին. իրեն անանկ կը թուէր թէ զանոնք կը լսէր, «Հովիտին ամենէն հարուստ մարդը», եւ յետոյ, «եթէ երազս իրականանար...»:

Իրիկուն եղաւ եւ դուքսը նկատեց որ ջղայնոտ եւ խռոված էր: Ուստի թեթեւցած զգաց ինքզինք, տեսնելով որ իր բոխը կառքով կ'անցնէր եւ հրաւիրեց զայն իր հետ ընթրելու եւ երեկոյթը մէկտեղ անցնելու:

— Քիչ մը զիս քննեցէք, տօքթոր, աւելցուց դուքսը. այս իրիկուն ինքզինքս շատ լաւ չեմ գար, կը խորհի՞ք թէ սրտիս բան մը կայ: Հայրս

յանկարծամահ եղած է եւ այս խորհուրդը շատ յաճախ զիս կը խռովեցնէ:

— Պողպատի պէս էք, բարեկամս, պատասխանեց բոխը. ինքզինքս երջանիկ պիտի նըկատէի եթէ ձեր առողջութիւնը ունենայի:

Ասոր վրայ բոխը գնաց եւ իրիկունը վերադարձաւ ընթրիքին համար: Իր բարեկամին խռովութիւնը եւ հոգւոյն վրդովումը տեսնելով զարմացաւ: Եթէ կարենար կարգաւ անոր միտքը, պիտի տեսնէր թէ դուքսը չէր դադարեր ինքնիրեն կրկնել սա բառերը, «Հովիտին ամենէն հարուստ մարդը բերելու կ'երթամ»:

Ժամը տասնըմէկ ու կէսին, մինչ բոխը ոտքի կ'ելլէր մեկնելու համար, դուրսի դուռը այնպէս մը ուժգին զարնուեցաւ որ երկու բարեկամները զացին տեսնելու թէ ով կրնար ըլլալ:

Դուռը զարնողը դարբին Յովհաննէսն էր որ հեկեկալով ըսաւ, «Ո՛հ, տօքթոր, շատ տխրալի է, ինծի ըսին որ դամ ձեզ կանչեմ, բայց վրատահ եմ թէ շատ ուշ է: Այս իրիկուն կիսա հիւանդ էր եւ չէր կրնար քնանալ. ինծի ըսաւ, «Գնա, ծերունի Ժազը կանչէ եւ իրեն ըսէ թէ շատ պիտի փափաքէի որ դար ինծի քիչ մը Ս. Գիրք կարդար եւ Յիսուսի վրայ խօսէր: Այս բարի ծերունին միշտ ինծի օրհնութիւն կ'ըլլայ»: Քանի որ Ժազ ինծի ըսած էր երթալ զինք կանչել ամէն անգամ որ կիսա իրեն պէտք ունենար՝ զացի այս ազնիւ ծերունիին տունը, որ ինծի ալ շատ օգտակար եղած էր: Հասայ, դուռը բացի եւ զինք գտայ ծնկաչոք իր մահճակալին առջեւ, ինչպէս իր յաճախակի սովորութիւնն էր: Կնոջս ապսպրածը իրեն ըսի. բնաւ չշարժեցաւ. դպչեցայ... մեռած էր»:

«Հովիտին ամենէն հարուստ մարդը» մըմնջեց դուքսը, «արդարեւ ինքն էր»:

Շատ մը տարիներ անցած են, բայց յաճախ ծերունի Ժազի պատմութիւնը դղեակին մէջ կը պատմուի:

— Բարի ծեր Ժազ, կ'աւելցնէ դուքսը, իր երազը իրականացաւ, վասնզի ինքն էր հովիտին ամենէն հարուստ մարդը: Հիմա կը հասկնամ թէ ինչու եւ գիտեմ թէ ինչն էր որ զինք ալքքան կ'երջանկացնէր:

Թարգմ. Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳԻՒՏ ՄԸ.— Այս վերնագրին տակ «Our Hope» կը գրէ:

Ստալոյ փրօփականտ մը այն լուրը տարածած է թէ Գերմանիա քրիստոնէութիւնը թողելով հեթանոսութեան դառնալու վրայ է: Այդ երկրին մէջ հարիւրաւոր եռանդուն քարոզիչներ կան, որոնք Յիսուս Քրիստոսի Աւետարանը եւ ճշմարիտ քրիստոնէական վարդապետութիւններ կը քարոզեն: Միլիոնաւոր ճշմարիտ հաւատացեալներ կան որ Աստուծոյ խօսքին եւ Աստուծոյ Քրիստոսին կողմն են: Քրիստոնէական շարժաթերթերը լաւագոյններէն երկուքը, գերմաներէն հրատարակուած, կանոնաւորապէս կը հասնին մեզի: Անոնցմէ իւրաքանչիւրը լեցուն է Ս. Գրական սքանչելի ուսումնասիրութիւններով, որոնցմէ շատեր մեր Տէրոջը երկրորդ գալստեան մասին:

Մեծանուն պահպանողական աստուածաբան մը, Բրօֆ. Ճէրհարտ, Պէրլինէն, մեր Տէրոջ ծննդեան մասին բաւական հետախուզումներէ վերջ իր գրածները հրատարակած է, եւ հաստատած է Մատթէոսի Աւետարանին երկրորդ գլխուն պատմական ճշգրտութիւնը: Քանզի քննադատութեան դպրոցը Բեթլէհէմի աստղին եւ մոզերու այցելութեան պատմութիւնը առասպել կը համարի: Բրօֆ. Ճէրհարտ փաստած է թէ պատմութիւնը բացարձակապէս ճիշդ է: Հետեւեալն է տրուած ծանօթութիւնը.

Բեթլէհէմի մէջ Քրիստոսի ծննդեան իսկական տարին է Ն. Ք. 7, եւ թուականը հաւանաբար Ապրիլ 2, ըստ Փրօֆ. Օսվալտ Ճէրհարտի, Պէրլինցի անուանի աստուածաբան, որ այդ դէպքին նկատմամբ Ս. Գրական հրէական եւ հեթանոսական տուեալները բազմաթիւ համար շատ մը տարիներ նուիրած է: «Յետախուզում եւ Յաւաջողութիւն»ի մէջ Բրօֆ. Ճէրհարտ յօդուած մը հրատարակած է արեւելքի մոզերէն տեսնուած աստղին վրայով, զոր ան կը նոյնացնէ Երեւակ մոլորակին հետ: Հին հրէական եւ քրիստոնէական հեղինակութիւններ մէջ բերելով, ան կ'ըսէ թէ ճիշդ ինչպէս որ Երբայեցիները հին աւանդութեամբ դաստիարակուած էին «Երեւակէն կառավարուելու», նոյնպէս Մեսիան ալ կ'ըսպասուէր նշանին տակը այդ մոլորակին, որ նոյն իմաստ է Քիւնին (Ամովս. Ե. 26) եւ Հոսեփային հետ (Գործ. Է. 43), երկու անուններ, որոնց տակ հրեաները կը ճանչնային «Աստուծոյ աստղը»:

Բարեխոսի եւ Սուգաի հորիզոնին վրայ, կը հաշուէ Ճէրհարտ, Երեւակ տեսանելի եղաւ Ն. Ք. 7, Ապրիլի առաջին շաբթուն, երբ մոզերը ճամբայ ելան փնտռելու համար «Ան որ հրեաներուն թագաւոր ծնաւ», ըստ Մատթէոսի Աւետարանին Բ. գլխուն: Ասիկա, կ'ըսէ ան, հաւանական կը դարձնէ եկեղեցւոյ հին հայրերէն Իպպոլիտոսի նշանակած Ապրիլ 2ը, որպէս Փրկչին ծննդեան օրը:

Երեւակի շարժման հետեւելով, կը գրէ նոյն թերթը, Ճէրհարտ կը ցուցնէ որ Հոկտեմբեր 10ի եւ Դեկտեմբեր 13ի մէջ տեղերը — ինք միջին թուականը ընտրելով Նոյեմբեր 5ը կ'առնէ երբ Յիսուս մօտաւորապէս 7 ամսուան էր, — մոզերը գալն տեսան «որ եկաւ կեցաւ Մանուկին եղած տեղին վրայ», երբ մոլորակը իր զէնիթը հասաւ:

Բրօֆ. Ճէրհարտ կուգայ այն եզրակացութեան թէ Մատթէոսի տուած պատմութեան բացարձակ ճշգրտութիւնը փաստուած է թէ՛ պատմականօրէն եւ թէ՛ աստղագիտականօրէն:

Անշուշտ զեկա. 25ը անվստահելի թուական մըն է իբր Տէրոջ ծննդեան օրը: Կոստանտինոս հնարեց զայն, երբ քրիստոնէութիւնը որպէս «պետական կրօնք» ընդունեց, ու Դեկ. 25ին տեղի ունեցող հեթանոս տօնի մը տեղը դրաւ Ծնունդը:

Յ. Ք.

Յիւանաճալ Աւետ. եկեղեցիներու տարեկան Միութեան ժողովը այս տարի եթէ Տէրը կամի տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտ. 1-4, ի Մարսէյլ: Եկեղեցիներէ կը խնդրուի ի մօտ ունենալ ասիկա, աղօթելու համար, որպէսզի Տէրը փառաւորուի ու եկեղեցիները շինութիւն ընդունին սոյն ժողովներով:

Rédaction du «PANPÈRE»

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. - Savournin Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ԶԲԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարածաւիջի աղօթածողութեան մասին հարցնել տեղին վրայ):

Ս ԱՐՍԷՅԷ—Հովիւ. (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8.15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դրո-
րոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարածաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիէնի, Սէն Թէոֆանի, Սէն Մարկրի-
թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէն Թ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.—Քարոզիչ՝ Պրն. Ս. Պազգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ. Պատ. Ա. Փաիազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն ՓԻԷՌ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ, Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼԻՕՆ.—Հովիւ, Պատ. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebate

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին կրիտասարգութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebate.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Արքանաւեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՈՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ.—Հովիւ, Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2°

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournesfort Paris 5°

Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
բրիտանացական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դուհեաց Բրիտանացական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.—Հովիւ, Վեր. Մ. Տէր Սահակեան,

16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԵՐԳ ՄԸ ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ

«ԲԱՆՔԵՐ»Ի ԱՄԷՆ ՄԷԿ ԹԻՒՒՆ ՄԷՋ

«Բանքեր»ի 1955 տարուան վերջին թիւին մէջ գրեցինք թէ կը փափաքէինք յառաջիկայ տարին Յունական թիւէն սկսեալ (եթէ կարելի ըլլայ)ամէն մէկթիւի մէջ մէյսէկ ձայնագրեալ հոգեւոր երգ շնորհ մանկանց սիւնակին տակ:

Գրեցինք նաեւ թէ «Բանքեր» չունի նօթայի թիփեր, բայց կրնայ 1500 ֆրանքի գումարով մը այդ անհրաժեշտ պէտքը լեցնել:

Քանի որայդ գումարը մինչեւ այսօր եկած չէ, «Բանքեր»ի այս թիւը առանց երգի լոյս կը տեսնէ: Այսու ամենայնիւ բարոյապէս ու նաեւ նիւթապէս քաջալերող նամակներ ընդունած ենք, մեր քով գտնուած գումարը 550 ֆրանքի կը հասնի: Կ'ակնկալենք որ 1500 ֆրանքը շուտով գտնուի եւ մանկանց համար մեր ունեցած փափաքը իրականանայ:

Ա՛րդ, եթէ անհատներ՝ կամ եկեղեցիներ նաեւ կիր. դպրոցներ համախմբուելով շուտով լեցնէին այս գումարը, մենք եւս նոյնքան շուտ պիտի կարենայինք հրատարակել երգերը:

Ուստի Բանքերի այս առաջին թիւը առնելուդ, սիրելի ընթերցող, հաճէ մտածել թէ այս մասին պարտականութիւն մը կ'զգա՞ս. եթէ այո, հաճէ չուշացնել:

Ընդունէ մեր սրտագին շնորհակալութիւնները սիրելի մանուկներու կողմէն
ԽՄԲ. ԲԱՆՔԵՐ»Ի

ՄՏԱՅԱՆՔ

Ղեւոնդ Արք. Դուրեան, իր կեանքն ու գործը
Տպագրութիւն Սահակ Մեսրոպ, Գաֆիլէ 25 Շարա Թէվ.
Ֆիք: Կազմեց Թ. Պ. Գալէմքեարեան, գին 10 եգպ. դիկ.

Մանկանց դաստիարակութիւնը տան մէջ
Նյն տ վարանէն ելած, Կեղինակ Լ. Պ. Գալէմքեարեան
գին 5 եգպ. դիկ. Շահեկան գիրք մը ծնողաց համար